ԿՆՈՋ ԴԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

ՀՏԴ 82-398
DOI: 10.56246/18294480-2025.18-24

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ
ԳՊՀ դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝
isnaira123456@gmail.com
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ
ԳՊՀ հայոց լեզու և գրականություն բաժնի շրջանավարտ
Էլփոստ՝ vard.karapetyan.1993@mail.ru

«Սասնա ծռեր» էպոսը հայ ժողովրդի ստեղծած գրական հարուստ ժառանգության ամենանշանակալի նմուշներից է: Հերոսավեպի հայտնաբերումից ի վեր շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում տարբեր սերունդների ներկայացուցիչների կողմից այն պատմվել է և գրառվել բանահավաքների շնորհիվ (ավելի քան 160 պատում):

Պետք է նշել, որ դեռևս վաղնջական ժամանակներից հայ կինը եղել ու ընկալվել է ընտանիքի հիմքը: Ոսկեդարի պատմիչ Ագաթանգեղոսը վկայում է, որ նախաքրիստոնեական շրջանում կինը ասոցացվել է կյանքի աղբյուրի հետ, նրան հաճախ անվանել են «կենսատու» և «շունչ տվող»[1]: Իսկ արդեն քրիստոնեության ընդունումից հետո կնոջ դերի արժևորումը մեծապես պայմանավորված էր Աստվածամոր կերպարով: Կորնթացիներին ուղղված առաջին թղթում Պողոս Առաքյալը նշում է, որ տղամարդն Աստծո պատկերն ու փառքն է, իսկ կինը տղամարդո՛ւ փառքն է[2]: Քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած ժողովուրդը այս հանգամանքը կարևորում է իր էպոսում:

Ներկայացված հոդվածում նպատակ ունենք ցույց տալու, թե էպոսի կանանց ո՞ր կերպարների մեջ է խտացված ժողովրդի հավաքական իմաստունությունը: Հասարակական կյանքում և երկրի ամրաշինման գործում ի՞նչ մասնակցություն ու դերակատարում են ունեցել կանայք: Հոդվածը գրելիս օգտագործել ենք նկարագրական, վերլուծական, համադրական մեթոդները:

---

[1] Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Եր., 2021:

[2] Ա Կորնթացիներին 11:7, Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարաններու

Բանալի բառեր՝ *«Սասնա ծռեր», ավանդույթ, էպոս, ասացող, դյուցազնավեպ, հերոսավեպ, պատումներ, քրիստոնեություն, ընտանիք:*

Նախաբան

Դարեր շարունակ շատ ազգերի և ժողովուրդների մեջ կինը որպես անհատ չի ընկալվել և հաճախ եղել է անտեսված ու ոտնահարված: Ցավոք, այսօր էլ՝ 21-րդ դարում, դեռևս դա խնդիր է: 19-րդ դարի փիլիսոփա Ֆ. Նիցշեն սուբյեկտիվ մոտեցմամբ կնոջը դիտարկում էր որպես մակերեսային, անմշակ հոգու տեր արարած, որի միակ առաքելությունը սերունդ տալն էր. «Կնոջ կոչումը սերն է, երեխաների, գերմարդու ծննդաբերումը»[1]: Ժողովուրդներ էլ կան, որ հավաքական իմաստնությամբ ընտանիքի կայացման, երկրի պաշտպանության ու ցեղի գոյատևման մեջ կնոջ դերի գիտակցումը արտացոլել են իրենց բանավոր ավանդություններում: Հայ ժողովրդն իր ազգային էպոսում կնոջը ներկայացրել է կամային, համարձակ հատկանիշներով, որից սկիզբ է առնում կյանքը:

Պետք է նշել, որ դեռևս վաղնջական ժամանակներից հայ կինը եղել է ու ընկալվել է ընտանիքի հիմքը: Ոսկեդարի պատմիչ Ագաթանգեղոսը վկայում է, որ նախաքրիստոնեական շրջանում կինը ասոցացվել է կյանքի աղբյուրի հետ, նրան հաճախ անվանել են «կենսատու» և «շունչ տվող»[2]: Իսկ արդեն քրիստոնեության ընդունումից հետո կնոջ դերի արժևորումը մեծապես պայմանավորված էր Աստվածամոր կերպարով: «Աստվածաշունչը» վկայում է, որ ի սկզբանե կինն արարվել է որպես քնքուշ, գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ ուժեղ էակ: Մեկը, ով պետք է լինի իր կողակցի օգնականը: Կորնթացիներին ուղղված առաջին թղթում Պողոս Առաքյալը նշում է, որ տղամարդն Աստծո պատկերն ու փառքն է, իսկ կինը տղամարդո՛ւ փառքն է[3]: Քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած ժողովուրդը այս հանգամանքը կարևորում է իր էպոսում: Մեր ազգային էպոսում, որում արտացոլված է հայ ժողովրդի հոգեկերտվածքը, կինը ընկալվում է որպես հասարակության լիիրավ անդամ, որպես կամային արարած, որ ընդունակ է ու կարող է որոշում կայացնել: Էպոսում բուն պատմությունը սկիզբ է առնում կնոջից՝ Ծովինարից, որին հաջորդում են Դեղձունի, Արմաղանի, Խանդութի ու Գոհարի՝ ռազմիկ և խորագետ կանանց կերպարները: Կինն է կյանք պարգևողն ու կյանքի պահապանը, կնոջն է վերապահված օջախը վառ պահելու դժվարին առաքելությունը, նա իր ամուսնու կողակիցն ու ընկերն է, հետևաբար կինը էպոսում ևս հերոսացվում է:

Ազգային էպոսում կնոջը վերագրվում է ոչ միայն գեղեցկություն ու հմայք, այլև ողջախոհություն, խորագիտություն ու քաջություն: Ժողովուրդը կերտել է կրոնական կապանքներից զերծ և հասարակության ստրկացնող, նսեմացնող օրենքներից դուրս գտնվող ազատ և ինքնուրույն, կամային և ուժեղ կանանց կերպարներ: Այդ բոլոր կանայք ներկայացված են որպես սեփական կյանքի ու

---

[1] Նիցշե Ֆ., Այսպէս խօսեց Զրադաշտը, Մի գիրք բոլորի և ոչ ոք համար, Բաքու, 1914, էջ 3:

[2] Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Եր., 2021

[3] Ա Կորնթացիներին 11:7, Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարաններու:

ճակատագրի վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնող անհատներ, ովքեր չեն հանդուրժում որևէ բռնացում իրենց կամքին: Մինչդեռ Սասունի հակոտնյա Մսրում այլ է վերաբերմունքը կանանց նկատմամբ, նրանք ընկալվում են որպես կամազուրկ արարածներ՝ ստրկական աշխատանքի համար նախատեսված, չկան ռազմիկ կանայք՝ բացառությամբ Իսմիլ խաթունի:

Գացեք տասը հարս ու աղջիկ բերեք.
Խինգը իմ ոտները մաժա.
Խինգն էլ երեսիս ճանճեր քշա[1]:

Սասնա տիրուհիները թե՛ իրենց հոգևոր հատկանիշներով, թե՛ ֆիզիկական կարողություններով չեն զիջում տղամարդկանց: Հասարակության մեջ նրանք շատ հաճախ ի զորու են կատարել երկրի և օջախի պաշտպանության գործառույթը: Նրանք և՛ ռազմիկ են, և՛ կառավարիչ, և՛ իմաստուն խորհրդատու:

Թեև հայ հասարակության մեջ բոլոր ժամանակներում պարտադրված ամուսնությունները համարվել են սովորական երևույթ, սակայն էպոսում այլ բան է արտացոլված: Այստեղ հերոսի և նրա ընտրյալ աղջկա միջև փոխադարձ համակրանքի և սիրո հիման վրա ընտանիք կազմելը ընդունված երևույթ է: Մեր էպոսում կոտրված են այն կարծրատիպերը, թե կինը զուրկ է խոսքի և կամքի իրավունքից: «Հայ ժողովորդը իր կերտած հանճարեղ էպոսում, որն իր վրա կրում է հայկական վերածնության կենարար դրոշմը, ժխտական դիրք բռնելով կնոջ ստրկական վիճակի նկատմամբ, պաշտպանում է ազատ ընտրության, փոխադարձ սիրո մարդկային վսեմագույն գաղափարները»[2]: Խանդութի համարձակ խոսքը ուղղված Դավթին, թե՝ «դու քո հոր կտրիճն ես, ես լե իմ», վկայում է այն մասին, որ կինը սեփական արժեքը գիտակցող էակ է և իրեն զգում է տղամարդուն հավասար: Իսկ Քեռի Թորոսի այսպիսի պատկերավոր արտահայտությունը, թե՝ «առյուծն առյուծ է, ինչ էգ, ինչ արու», ևս մի վկայությունն է այն փաստի, որ ժողովուրդը կանանց իրավահավասարությունը ընդունում և ընկալում է որպես բացարձակ ճշմարտություն:

Ազգային վեպից պարզ է, որ դրա ստեղծման ժամանակներում հայ կինը շատ ավելի ազատ է եղել իր ընտրության ու զգացմունքների դրսևորման մեջ, քան հետագա դարերում:

Են գախ՝ յես վորի սրտի վերեն
Վոր խնձոր զարնեմ, իմ խավնածն են ի[3]:

---

[1] **«Սասնա ծռեր», հատոր Բ., մաս 2-րդ, խմբ.՝ Մ. Աբեղյանի և աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1951, էջ 135:**

[2] Ղազարյան Ջ., Բարոյական սկզբունքները «Սասունցի Դավիթ» էպոսում, Լրաբեր հասարակական գիտությունների , թիվ 2, Երևան, 1967, էջ 60:

[3] «Սասնա ծռեր», հատոր Ա , Ժողովրդական բանահյուսություն, Ժողովրդական վեպ /Խմբ.՝ ակադեմիկոս Մ. Աբեղյան/, Յերեվան, 1936, էջ 1072:

Մեր հերոսավեպում կնոջ և տղամարդու հարաբերությունները պատկերված են որպես փոխադարձ և իրավահավասար կապեր: Եվ քանի որ էպոսը մեր ժողովրդի մտքի ծնունդն է, հետևաբար կնոջ և տղամարդու իրավահավասարության գաղափարը հայ մարդու ընկալելի և ընդունելի գաղափարն է: Պատումներից մեկում Քեռի Թորոսի բերանով ժողովուրդը պատգամում է փոխադարձ ու առանց բռնության սիրո գաղափարը.

Էտի աղջկա բանն ա.
Ո՞ր մեկիդ տղին կառնի, թո՛ առնի[1]...

Դյուցազնավեպի տարբեր պատումները վկայում են, որ հայ հասարակության մեջ հաճախ ամուսնությունները կայացել են աղջկա և տղայի փոխադարձ համաձայնության արդյունքում՝ առանց որևէ մեկի միջնորդության: Երբ Դեղձուն Ծամը իր դիմանկարն է ուղարկում Սանասարին, վերջինս կոնֆլիկտի մեջ է հայտնվում եղբոր՝ Բաղդասարի հետ, սակայն, միևնույն է, գնում է Դեղձունի հետևից: Դեղձունն էլ, տեսնելով իր սիրո կանչով եկած հսկային, նրա ուժն ու համարձակությունը, հասկանում է, որ չի սխալվել ընտրության մեջ.

Սա՛նասար, ի՞նչ կա, խե՞ր էլնի,
Սանասար ասաց,- իս էկիր իմ՝ քի ձի կնիկ առնիմ:
Խանում կ՛ասա.- Աչքիս վրա, իս քի պես ըգիթ մ'էլ տը տեսնի՞մ:
Էտ ժամանակ մատնիքներ խիտ իրարու կը փոխին[2]:

Խանդութը նույնպես, լսելով Դավթի քաջության ու ժողովրդասիրության մասին, հեռվից հեռու սիրահարվում է նրան և որոշում է աշուղներ ուղարկել, որ իր գովքը անեն իր իսկ բառերով: Նա ակնկալում է, որ Դավթի հարցում չի սխալվել, որ նա իր տեսակից է և ուղարկված պատգամը պիտի հասկանա, ուստի իրեն հատուկ համառությամբ պատվիրում է իրեն գովել իր սովորեցրած տողերով.

Մինակ իմ սովըրցրած խաղ կ'ըսիս:
Խա՛նում, քու խաղ իմա՞լ ա:
Ենտեխ կ'ըսիս, ըսավ.
Իմ բոյլի՛ Խանդութ ինչ որ բոյն ծառն ի չինար:
Իմ ճերմա՛կ Խանդութ ինչ որ բամբակ գիս ու դիզիս:
Իմ կարմի՛ր Խանդութ ինչ որ խընծոր ծառն ի ծիրին:
Իմ խորոտի՛կ Խանդութ ինչ որ լուսնակ տըսնըհինգին[3]:

Էպոսում այդպիսի դրվագները փաստում են, որ աղջկա նախաձեռնությամբ և ցանկությամբ կայացած նշանադրություններն ու ամուսնությունները սովորական ու ընդունված են եղել հայ հասարակության

---

[1] «Սասնա ծռեր», հատոր Բ., մաս 2-րդ, էջ 143:
[2] «Սասնա ծռեր», հատոր Բ, 1-ին մաս, (խմբ.՝ Մ. Աբեղյանի և աշխ.՝ Կ. Մելիք- Օհանջանյանի), Երևան, 1944 , էջ 357:
[3] «Սասնա ծռեր», հատոր Բ, մաս 2-րդ, էջ 306:

կողմից: Այսպես, թե՛ Խանդութը, որի ձեռքը հայրը շահին էր խոստացել, թե՛ Դեղձունը, ով փակված էր ամրոցում, թե՛ Չմշկիկ Սուլթանը, ով որոշ պատումներում անձամբ է նամակ գրում Դավթին, թե՛ Իսմիլ Խաթունը, ով իր գոգնոցով ու լաչակով է իր մոտ կանչում Միերին, իրենք են իրենց բախտը վճռում, և առաջին քայլը իրենցն է:

Գլխավոր գործող կանանց կերպարները որոշակի առանձնահատկություններ են դրսևորում թե՛ դստեր, թե՛ կնոջ, թե՛ մոր կարգավիճակում: Էպոսում կնոջ դերը բարձր է և խոսքը արժեքավոր ոչ միայն հայրական տանը գտնվող աղջիկների դեպքում: Կինը մնում է իր բարձրության վրա նաև ամուսնանալուց հետո: Դյուցազնավեպում կնոջ դերը ընդգծվում է մի քանի գործառույթներով: Ամուսնու տանը կնոջը վերապահվում է ոչ միայն սերնդի շարունակման գործառույթը, այլև կողակցի խորհրդատուի, օգնականի, իսկ ամուսնու մահանալուց հետո նաև երկրի ղեկավարի պարտականությունները: Հերոսավեպում կինը ոչ միայն ընտրության, խոսքի իրավունք ունի ամուսնու հարկի տակ, այլև ընկալվում է նրա տեղապահ (Դեղձուն, Գոհար, Իսմիլ):

Ծովինարը, ով համաձայնել էր ամուսնանալ օտար բռնակալի հետ հանուն իր երկրի անվտանգության, Խալիֆի տանը լսելի ձայն ունի, նրա կամքը ընդունում է ինքը՝ Խալիֆը: Նրա խոսքին ենթարկվում են որդիները, նրա իմաստուն խոսքը ընդունելի է նաև Սասունում: Հետևաբար Ծովինարը արժևորվում է թե՛ դստեր, թե՛ կնոջ, թե՛ մոր գործառույթներոհմ:

Դեղձունը, «հմայքի» երկրից Սասուն գալով, դառնում է հավատարիմ կնոջ ու սիրող մոր լավագույն օրինակը: Ամուսնու անժամանակ մահը թևաթափ չի անում նրան: Չհաշտվելով կորստի հետ՝ նա միաժամանակ ստանձնում է երկրի կառավարման անչափ պատասխանատու գործը: «Այստեղ պարզորոշ զգացվում է, որ Քառսուն Ճուղ-Ծամի կերպարի մեջ խտացել են մայրիշխանության ժամանակների տան տիրուհու մի շարք բնորոշ գծեր: Մայրիշխանության շրջանի (ձգվել է հին քարե դարից մինչև զարգացած նոր քարե դար) հիմնական հատկանիշներն են եղել կնոջ գերակա դիրքը և առաջնային դերը ընդհանուր համայնքում, ամուսնության նախաձեռնումը»[1]: Որդու «էրթմնակոտր» մահից հետո Դեղձունը դրամատիկ ու հուզիչ որոշում է կայացնում: Նա զրկում է ինքն իրեն արևի լույսից այնքան ժամանակ, քանի դեռ չի տեսել Սասնա տան նոր ճրագին կառավարչի դերում: Այսպիսով, առաջին ճյուղի վիպական գործողությունները առաջ մղող ուժը պատկանում է Ծովինարին և Դեղձունին[2]:

Արմաղանը՝ առևանգված կույս աղջիկը, որպես դուստր թանկ է հոր համար. վերջինս ցավով պատմում է Միերին, որ դուստրը գերի է դևի ձեռքին: Որպես կին՝ Արմաղանը ընդգծված անհատականություն է, ով լավ գիտի խոսքի ու

---

[1] Իսկանդարյան Ն., Արեգակ-աղջկա խորհրդանիշը Քասուն ճյուղ -ծամ Դեղձունի կերպարում, էջմիածին, Գ, 2008, էջ 92:

[2] Վ. Եղիազարյան, Կինը էպոսում, Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2012, էջ 194

երդման արժեքը, նա բարձր է գնահատում ամուսնական հավատարմությունն ու չի պատրաստվում ներել Միերին:

Խանդութը սեփական կամքով ու որոշումներով առաջնորդվող աղջիկ է, ով իր լավագույն հատկանիշները դրսևորում է հատկապես կնոջ կերպարում: Դավթի համար նա ոչ միայն սիրող կին է, այլև զինակից ընկեր: Շատ դրամատիկ է հատկապես նրա մահը: Դավթի՝ այլևս չլինելու լուրն իմանալուն պես, առանց երկար-բարակ խորհելու Խանդութը վերջ է տալիս իր կյանքին՝ դառնալով սիրող, առանց կողակցի իր կյանքը լույսից ու իմաստից զուրկ համարող կնոջ օրինակ: Խանդութը նաև սիրող մայր է, ով նույնիսկ մահից հետո խոր գերեզմանից ուղղորդում է որդուն՝ անհաղորդ չմնալով նրա աղերսներին :

Էպոսում Գոհարին տեսնում ենք դստեր, կնոջ և ռազմիկի գործառույթ-ներով: Նա զուրկ է մոր գործառույթից՝ Փոքր Միերին հասած հայրական անեծքի բերումով: Այս առումով Գոհարը ինչ-որ նմանություն ունի Արմաղանի կերպարին, քանի որ ամուսնու հետ կիսում է անեծքի զորությունը: Խանդութի պես Գոհարն էլ ամուսնու համար ոչ միայն սիրող կին է, այլև դաշնակից ու զինակից մարտի դաշտում:

Էպոսի կանանց հաճախ տրվում է «փահլևան» մակդիրը: Այս փաստը վկայում է այն մասին, որ մաքառումների ճանապարհ անցած հայ ժողովուրդը կնոջ մեջ տեսնում է նաև պաշտպանի, ռազմիկի հատկանիշներ: Պատումներից մեկում Գոհարը Միերի հետ հավասար մարտ է վարում, ինչը վկայում է, որ մեր դյուցազներգության մեջ կանայք ևս ընկալվում են որպես ուժի կրող: Էպոսի գլխավոր կին հերոսուհիները հմուտ ձիավարողներ են, փայլուն տիրապետում են զենքի արվեստին, հարկ եղած դեպքում մարտի դաշտում կռվում են տղամարդուն հավասար: Բայց միայն ֆիզիկական ուժը չէ, որ նրանց առանձնահատուկ է դարձնում: Կնոջ ազատ կամքի, խոսքի իրավունք ունենալու վառ ապացույցը Արմաղանն է: Նա չի կարող հաշտվել արժանապատվության ոտնահարման հետ, չի կարող ճակատագրի հլու կամակատարը դառնալ: Միերի արդարացումները, թե «խոսք է տվել», պիտի պահի իր խոսքը, ընդունելի չեն նրան, քանի որ նա երբեք նման խոստում չէր տա օտարին: Ուստի պայման է դնում Միերի առաջ, որ եթե համաձայնի Իսմիլի առաջարկին, ապա պիտի մոռանա, թե Սասունում կին ունի: Նրա մեկ խոսքն ու որոշումը բավական են, որ անգամ տարիներ անց տան դուռը փակվի ամուսնու առաջ: Նրա որոշման հետ հաշվի են նստում ոչ միայն Միերը, այլև Սասունի ավագները, և միայն հայրենիքի անվտանգության հրատապ խնդիրն է ստիպում Արմաղանին փոխել որոշումը՝ գնալով գիտակցված ինքնազոհաբերման: Սա իրապես բացառիկ ոգու տեր անհատներին հատուկ քայլ է:

Դյուցազներգության կերտման ժամանակներում հայ մարդը կնոջ մեջ տեսել է իմաստուն, գիտուն, խելացի էակի: «Սասնա ծռեր»-ում կանայք աչքի են ընկնում նաև իրենց փայլուն խելքով, հեռուն տեսնելու կարողությամբ: Երբեմն նրանց մարգարեուհու կամ գուշակուհու հատկանիշներ են վերագրվում:

Ծովինարը գիտակցում է, որ օտարության մեջ Խալիֆի կինը դառնալու գնով հայրենիքը կործանումից փրկելը շատ ավելի խելամիտ որոշում է, քան իր

կրոնական զգացմունքները փայփայելով՝ անմեղ ժողովրդին սրի մատնելը: Արմաղանը ճիշտ է ըմբռնում ժողովրդի շահերը, միանգամից հասկանում է, որ ամուսնու՝ Մըսր գնալը կարող է ճակատագրական ու կործանարար լինել Սասունի համար: Խանդութը ամեն կերպ փորձում է կանխել արյունահեղությունն ու պատերազմը, երբ լսում է, որ թշնամին նպատակ ունի հարձակվել Սասունի վրա: Գոհարը ամուսնու հեռանալուց հետո անգամ նամանկով խնդրում է իրեն թաղել Սասնա տան Մեծ Տիկնոջ՝ Խանդութի կողքին, որ նույնիսկ մահից հետո Սասնա տան միասնությունը կայուն լինի:

Կնոջ դերի արժևորման լավագույն օրինակ է նաև Արտատեր Պառավի կերպարը: Պառավը միշտ, բոլոր պարագաներում Սասնա հերոսների, հատկապես Դավթի կողքին է, դժվար պահին հուշում ու ուղղորդում է նրան: Հովսեփ Օրբելին իր արժեքավոր ուսումնասիրության մեջ, անդրադառնալով Արտատեր Պառավի կերպարին, նրան համեմատում է մայր հողի հունական աստված Դեմետրեի հետ. այսինքն՝ մայր հողը «....որը բազմաթիվ ժողովուրդների մոտ ընդունել է մայր-կնոջ կերպարանք, դարձել է իմաստուն խրատներ շնորհող...»[1]: Պառավն է, որ Դավթին հուշում է առևանգված և մարագում փակված հայ կանանց ու աղջիկների մասին, որ թշնամու հարկահանների հետ իր ձեռքի անթրոցով մենամարտելու փոխարեն ձեռք բերի հոր հրեղեն ձին ու սպառազինությունը: Պառավը Դավթի հանդեպ դրսևորում է մայրական գթություն, հոգատարություն, ինչից նա զրկված էր: Անգամ հորեղբայր Հովանը այնքան հոգ չի տանում Դավթի մասին, ինչքան այդ հասարակ կինը: Որոշ պատումներում նշվում է, թե Ձենով Հովանը ափսոսում է Քուռկիկ Ջալալին ու Թուր Կեծակին Դավթին հանձնել, մինչդեռ պառավը Դավթին սովորեցնում է ընդվզել օտար զավթիչների դեմ ու ժողովրդի փրկության միակ ճանապարհը համարում է ապստամբությունը: Պառավի կերպարում բյուրեղված է հայ ժողովրդի հավաքական իմաստնությունը:

Այսպիսով, «Սասնա ծռեր» էպոսում ընդհանուր առմամբ կինը դիտվում է որպես հերոսին հավասար անձ, իրավահավասար մեկը, որին հասնելու և նվաճելու համար անհրաժեշտ է ուժեղ ու կամային լինել: Հայ ժողովրդի հավաքական իմաստնությունը, բացառիկ մարդասիրական որակները, անձնուրաց հայրենասիրությունն ու վեհ գաղափարները արտացոլող էպոսը լավագույն գրական հուշարձան-ապացույցն է այն բանի, որ հասարակական կյանքում, օջախի ստեղծման, պահպանման հարցերում, ինչպես նաև երկրի ամրաշինման գործում անգնահատելի է հայ կնոջ դերը: Առյուծն առյուծ է, էգ լինի, թե որձ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Երևան, 2021:
2. Աստվածաշունչ, Մատեան հին և նոր կտակարաններու, Մոսկվա, 1944:

[1] Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Եր., 1956, էջ 123

3. Եղիազարյան Վ., Կինը էպոսում, Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2012:
4. Իսկանդարյան Ն., Արեգակ-աղջկա խորհրդանիշը Քասուն ճյուղ-ծամ Դեղձունի կերպարում, Էջմիածին, Գ, 2008:
5. Ղազարյան Ջ, Բարոյական սկզբունքները «Սասունցի Դավիթ» էպոսում, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Երևան, 1967:
6. Նիցշե Ֆ., Այսպէս խօսեց Զրադաշտը, Բաքու, 1914:
7. «Սասնա ծռեր», հատոր Ա , Ժողովրդական բանահյուսություն, Ժողովրդական վեպ (խմբ.՝ ակադեմիկոս Մ. Աբեղյանի, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), Յերեվան, Պետական հրատ., 1936:
8. «Սասնա ծռեր», հատոր Բ, մաս 1-ին (խմբ.՝ Մ. Աբեղյանի և աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, 1944:
9. «Սասնա ծռեր», հատոր Բ, մաս 2-րդ (խմբ.՝ Մ. Աբեղյանի և աշխ.՝ Կ. Մելիք- Օհանջանյանի), Պետհրատ., Երևան, 1951:
10. Օրբելի Հ., Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956:

VALUING THE ROLE OF A WOMAN IN THE EPIC POEM "SASNA TSRER"

ISKANDARYAN NAIRA
PhD in Philological Sciences,
Associate Professor, GSU Lecturer
e-mail: isnaira123456@gmail.com
KARAPETYAN VARDUHI
A graduate of the Department of Armenian language and literature,
Faculty of Philology, GSU
e-mail: vard.karapetyan.1993@mail.ru

The epic poem "Sasna Tsrer" is one of the most significant examples of the rich literary heritage created by the Armenian people. Since the discovery of the heroic novel, it has been told and written down by representatives of different generations for about a century thanks to folklorists (more than 160 stories).

Since ancient times, the Armenian woman has been regarded as the cornerstone of the family. The Golden Age historian Agathangeghos testifies that in the pre-Christian period, a woman was associated with the source of life: she was often called "life-giver" and "breath-giver". And after the adoption of Christianity, the appreciation of the role of a woman was largely determined by the image of the Mother of God. In his first letter to the Corinthians, the Apostle Paul notes that man is the image and glory of God, and woman is the glory of man. The people who first

adopted Christianity as a state religion attach importance to this circumstance in their epic.

In this article, we aim to explore which female characters in the epic embody the collective wisdom of the people. We also examine the roles and contributions of women in public life and in the strengthening of the nation. To achieve this, we employed descriptive, analytical, and comparative methods.

Keywords: *"Sasna Tsrer", tradition, epical poem, storyteller, heroic novel, short stories, Christianity, family.*

ОЦЕНКА РОЛИ ЖЕНЩИНЫ В ЭПОСЕ «САСНА ЦРЕР»

ИСКАНДАРЯН НАИРА
Кандитат филологических наук, доцент
Преподаватель ГГУ
электронная почта: isnaira123456@gmail.com
КАРАПЕТЯН ВАРДУИ
Выпускница ГГУ, филологический факультет,
армянский язык и литература
электронная почта: vard.karapetyan.1993@mail.ru

Эпос «Сасунские храбрецы» — одно из самых значимых произведений богатого литературного наследия армянского народа. С момента его обнаружения на протяжении более века он передавался из поколения в поколение и записывался собирателями фольклора (более 160 версий). Следует отметить, что с древних времен армянская женщина считалась и воспринималась как основа семьи. Историк Золотого века Агатангелос свидетельствует, что в дохристианский период женщина ассоциировалась с источником жизни, ее часто называли «животворящей » и «дарующей дыхание». В Первом послании к Коринфянам апостол Павел отмечает: «Мужчина — образ и слава Божия, а женщина — слава мужчины». Армянский народ, первым принявший христианство как государственную религию, отражает эту концепцию и в своем эпосе.

В данной статье ставится цель показать, в каких женских образах эпоса сосредоточена коллективная мудрость народа, а также выяснить, какое участие и роль играли женщины в общественной жизни и укреплении страны. При написании статьи мы использовали описательные, аналитические, сопоставительные методы.

Ключевые слова: *«Сасна Црер», традиция, эпос, сказитель, героический Роман, рассказы, христианство, семья.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 25.12.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 16.01.2025թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: